

ԵՐՈՒԱՆԴ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Տես էրես 47)

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

ՏԵՍԻԼ Ա.

ՍՄԲԱՏ, ԱՐԳԱՄ, ՏՈՒՐ:

ՍՄԲ. Թող դարանեսցի Երուանդ սպանանել զմեզ. մեզ շատ է գիտեալ այսչափ: Երգուեալ 'ի սուսերս, եթէ կարասցէ նա շիթ մի միայն հա- նել յարենէ մերմէ, և ոչ նախ ինքն զիւրն հեղ- ցէ բովանդակ:

ԱՐԳ. Սակայն և դո՛ւ ևս երգուար ընդ նոսա:

ՏՐ. Եւ զեմրդ գոյր հրաժարել: Կոռնակ զի սա- կաւիկ մի խէթ արկ 'ի սիրտ արքայի, ոչինչ յեր- կուանամ ասել՝ եթէ մահու չարաւ վճարեսցի նա 'ի միջոյ: Ոչինչ զանխուլ է բնութիւն ար- քայի. բազում անծանօթից և 'ի մեծամեծ յան- ցանս ըմբռնելոց՝ զիտեմք զի ներեաց. իւրոցն և ընտանեաց ոչ բնաւ, այլ և ոչ խուն մի կասկա- ծանաց: Այլ իմ մի գրեսցի անուան 'ի կենդանիս, եթէ ոչ արեամբ բռնաւորին ջնջեցից այսօր զբռնաւորութիւն յերկրէս Թորգոմայ. ոչ վայ- րապար ինչ ածեալ է իմ սուսեր յազգեր:

ՍՄԲ. Ոչ այդպէս, մի լինիր մեզ խոչ ընդ ոսն. մեզ պահեալ է այդ պարծանք. զի 'ի նմա պա- կեսցի արութիւն քաջութեանս 'ի գալ Արտա- շեսի հասանել առ մեզ:

ԱՐԳ. Եթէ 'ի մեր կոյս ելեալ արդարութեան ես սիրող, զիմրդ դաւող նենգութեամբ ակն ունիս նիզակակից ձեռնտու լինել Սմբատայ և Արգա- մայ:

ՏՐ. Նենգաւոր ամենայն՝ բռնաւոր է, ոչ որ զնո- սա հնարի բառնալ 'ի միջոյ:

ԱՐԳ. Արդարութեամբ, և ես հաւանեալ եմ:

ՏՐ. Է՛հ, Թոյլ տուք զանիրան կորուսանել. չեք արդարութիւն մեծ քան զայս. ո՛չ ներէք և ինձ կցորդ լինել պարծանաց. յորոյ սիրտ ոչ վառե- ցաւ երբէք կայծառն փառաց, զիմրդ անկան ալիք, աճիւնն այն բոցոյն, ուր ոչինչ եկեաց: Ինչ մի միայն կամէի գիտել. ո՞ր արդեօք էր զօրա- վարն այն աւագ՝ որ յառաւօտուն մարտին հա- րեալ 'ի Կոռնակայ՝ բարձաւ կիսամեռ:

ԱՐԳ. Ի Կոռնակայ սպանաւ նա, ապա Թերեւս հայրասպան գտաւ: Իմ ցարդ չեք տեսեալ զայրն, այլ շնորհ լուայ այժմ՝ յիմում բանա- կին, որպէս Թէ հայր լինել նորա. զի 'ի մեռա- նէն անգուլ 'ի շրթունս իւր հեծութեամբ բե- րէր. Ա՛հ Երուանդ, Կոռնակ. այ Թշուառական Տուր, զինչ արդեօք լինիցի պատանեկին: Խըն- դրեալ է զիս խօսել ինչ առանձինն, և արդ ես գնամ առ նա: Այլ զքէն կասկածեմ, Տուր, մի եթէ և ընդ Կոռնակ ինչ մեքենայեցեր, և գի- տէր ինչ նա զնենգութենէդ:

ՏՐ. Թշուառական Տուր. ես 'ի բանի այդմ 'ի նո- ցանէ տեսանեմ պատրաստեալ ինձ դաւ. աղէ դու քաջդ, տեղեկացեալ ամենայնի ծանուցես ինձ գրով, Թէ հնար է. զի այլ անմարթ է ձեզ գե- դերել 'ի քաղաքիս. Թերեւս և այս իմ վերջն տե- սութիւն է ընդ ձեզ. հապա, արիք մեկնեցա- րուք, զգուշացարուք անձանց, խնայեցէք 'ի կեանս ձեր. և իմ երգուեալ յարեւ անմահից և 'ի շողիւն սուսերիս, ոչ Թողացուցից նոցա ժամ և պարապ դաւանաց:

ՍՄԲ. Եւ զինչ գործիցես:

ՏՐ. Ես գիտեմ. ելէք դուք աստի. և եթէ գէպք ինչ լինիցին, գրով զեկուցից ձեզ գաղտ. բայց եթէ յանձանօթ ինչ դիմաց կեղծեմ ես զԹուլթս, մի ինչ երկբայիք. չեք որ այլ 'ի քաղաքիս ձեռն- տու 'ի ձեզ: Լուարուք և գաղանիս ինչ. հնարիմ ես սովաւ կորուսանել նախ ընդ ձեռն Երուան- դայ զԿոռնակ, որ ոչ որպէս կարծէք... ա՛հ, աւասիկ Երուանդ...: Հապա, տակաւին իշխէք կալ առաջի իմ, ապստամբք, յանդգուէք:

ՏԵՍԻԼ Բ.

ԵՐՈՒԱՆԴ և առաջինքն:

ԵՐԳ. Ա՛ստ էք դուք տակաւին, նենգող դաւա- ճանք. ա՛հ. միթէ ո՛չ երկուք բաւեսցեն ընդդէմ երկուց:

ՍՄԲ. Եւ զինչ, միթէ կամէիր մեզ փախչել իբրեւ ճագար, խուճապել սրանալ յերեսաց սրտմը- տութեան քո. ճոխաճեմ սիգալով ընդ հրապա- րակս գնամք. այլ ահաւասիկ եմք մեք ոչ երկուց միայն ընդդէմ, այլ և հաղարաց բիւրուց:

ԵՐԳ. Սակայն չախորժեմ դաւել զոք. ոչ կա- միմք նմանել նենգութեան ձերում. զի՞ խնդրէիք աստանօր, հրապուրե՛լ և զիմ հաւատարիմ Տուր:

ԱՐԳ. Անծանօթ մեզ այդ արուեստ. մեր 'ի քա- ջութիւն և յարգարութիւն է յուսացեալ՝ ոչ 'ի նենգութիւն. զայդ մեք այլում Թողաք:

ԵՐԳ. Ժպիրհ ապստամբ. ո՛չ դու ես Արգամ վը- տարանջեալ անկուշեալ 'ի բնիկ տեսանէդ. ո՛չ դա Սմբատ յելուզակ, որ լարեալ զաղեղն նեն- գութեան որսացաւ զքեզ գազան մի վայրի: Ոչ դո՛ւք էք որ զնիզակակիցս մեր հրապուրեցէք Հռովմայեցիս՝ նենգել մեզ, լուծանել քակտել զուխտն, և զլանալ մեզ Թիկունս:

ՍՄԲ. Ոչ բերեմ հանգուրժել. աղէ դու միան- գամ ուշիմ լեր, Երուանդ, մի 'ի զուր 'ի վերայ մեր խիզախեր. մեզ յայդ անարգութիւն նեն- գութեան իջանել. ոչ Հոռովք, ոչ. աստուածք 'ի բարձանց զլանան Թիկունս բռնաւորաց. և ո՞ր այլ իցէ Աստուած՝ որ ձեզն պաշտպանիցէ:

ԵՐԳ. Երուանդ. նա միայն շատ է՝ մինչ զօգս զայս շնչէ. և եթէ երբեք նա յերկիր հողեսցի, ոսկերք կան նորա՝ լուութեամբ իւրեանց խու- ճապել զձեզ, և խոչ և խութ զօտիւրդ պատել: Ի բաց կացէք յերեսաց իմոց, ապստամբք, չա- րադուրիս դաւաճանք. ելէք 'ի տանէ իմմէ, աչք իմ մի տեսցեն 'ի ձեզ:

ՍՄԲ. Որ 'ի կենդանոյն չերկնի՛ 'ի մեռելոյն զիմրդ զարհուրի: Նշանեմք և այլ չմտանեմք՝

բայց յամօթ ձեզ. գնալք 'ի բաց, զի դարձցուք միւսանդամ իբր 'ի մեր քաղաք: (Եւնէն):

ՏԵՍԻԼ Գ.

ԵՐՈՒԱՆԻ, ՏՈՒՐ:

ԵՐԳ. Ա՛յ, խրոխտ ապերասանք, սակայն... ընդ հուպ կարկեսցին բարբառք... Դո՛ւ ես իմ մը տերիմ Տուր, միթէ և աչք իմ դաւեսցեն զիս. ո՛չ ես իսկ տեսի զհանգէս հաւատարմութեան քո. խնդրէին պատրել հրապուրել զքեզ. եկ 'ի գիրկս իմ, ընկալ զողջոյնս սիրոյ. այլ ես 'ի քեզ եմ ապաստան:

ՏՐ. Յորչափ արփին անմահ լուսաւորէ զիս, և սուսեր ընդ մէջ կայ իմ, մի ինչ զանգիտիցէ գահն արքունի. խնդրեցից զվրէժ նորա, կանգնեցից զարդարութիւն 'ի նմա. սակայն...

ԵՐԳ. Սակայն, զինչ, աղէ ասա:

ՏՐ. Ո՛ր տայր եթէ ամենեքեան որ զքե են իբրև զՏուր լինէին...

ԵՐԳ. Զինչ իցէ, է՞ որ առ ինև դաւաճան:

ՏՐ. Թէպէտ և զբոլորից խէթ եմ մտօքս, զարդիս զմիոյն ունիմ հաւաստիս գործոյ:

ԵՐԳ. Ո՞ր այն իցէ, մի լուեր յինէն. եթէ...

ՏՐ. Այն որ քոյին ձեռք խոնարհեալ յերկրէ բարձեր առեր 'ի վեր, և առ քե նստուցեր, ուրում աննախանձ աստուածաբար շնորհեցեր... ա՛հ, իմանամ զի վէրս դնեմ 'ի սիրտ քո:

ԵՐԳ. Կոռնակ:

ՏՐ. Եւ ո՞ր այլ:

ԵՐԳ. Ո՛հ գազանութեանս, ո՛չ իսկ և սիրտ իմ գնաց 'ի հրաժարել նորա յուխտիցն:

ՏՐ. Սակայն մի անկցի սիրտ գիւցազինդ. տակաւին Տուր կենդանի կայ. այսչափ ինչ գիտեմ զնմանէ, զի 'ի մթանալ երեկոյիս ելեալ ընտրեւ լուք ոմամք...

ՏԵՍԻԼ Դ.

ԶԱՐԵՆ և առաջինքն:

ԶԱՐ. Տէր արքայ, հովանացին զիք գլխոյ գիւցազինդ, և զսուսերս մեր սրեսցեն ընդդէմ թշնամեաց քոյ:

ԵՐԳ. Զինչ իցէ, զայն ասա:

ԶԱՐ. Այն ինչ երեկոյն փախեալ հանգէպ գիշերին, առեալ ընդ իւր Կոռնակայ 'ի գնդէ իւրմէ ընտիրս իբրև հարկուր մի, և կապարձա դարձուցեալ ել անկաւ առ թշնամիսն:

ՏՐ. Ա՛հ, դաւ է. ո՛չ կարացիք ունել զԿոռնակ. (Ֆէրասի) վրէպ գտայ 'ի յուսոյս:

ԶԱՐ. Իբրև բազումք 'ի գիմի հարկանէին, նա նշանացի արարեալ նենգանօք խաղաղութիւն խոստանայր. մարտ եղաք ընդ նմա մինչև 'ի գուռն պարսպին, ընդ որ ելեալ արշաւատոյր թուեան տադնապաւ 'ի կողմն մուրացեան վրանաց 'ի ճամբար վիշապազանց:

ԵՐԳ. Ա՛հ, ո՛ւր իցէ նենգաւորն. քամեցից զերաւ կռնս յարենէ նորա: Փութա պնդեաց Զարեն, և եթէ դեռ 'ի քաղաքիս են՝ կալարուք զՍմբատ

և զԱրգամ. 'ի նոսա յագեսցի սրամուռութիւն իմ: ԶԱՐ. Բարէ, աւասիկ Սմբատ, և Կոռնակ ընդ նմա:

ՏԵՍԻԼ Ե.

ՍՄԲԱՏ, ԵՐՈՒԱՆ և առաջինքն:

ՍՄԲ. (Բերէ լիւր-առ կապեալ). Ոչ զերկին և զերկիր՝ զոր արհամարհեցեր առնուլ 'ի ձեռաց առեւեաց, այլ ահաւասիկ զանձն ատելոյ քո և թշնամոյ շնորհեմ քեզ. գիտա զոյս թշնամանեցեր նենգողս, և յոյս յուսացար. ծանիր զսա զի նշկահեալ զքեզ առ մեզ հատուածեցաւ, զոր առանց ինչ ընդ բանս ածելոյ և խօսից ունկընդրութեան՝ առաջի քո վարեցի կապեալ. ծանիր զմեր մեծանձնութիւն՝ որ մերով իսկ ձեռք շնորհեցաք քեզ, զոր և առցես իսկ 'ի հարկէ մտադիւր սիրով:

ԵՐԳ. (Ինքն) Երկինք, զինչ գործեցից. խոնարհեցայց ամա:

ՍՄԲ. Զի լուեալ կայք. ահաւասիկ թշնամին ձեր: ԵՐԳ. Լուծցի արձակեսցի Կոռնակ. (Զարէ և խօսէ): Խնդրես ինչ այլ ևս տեսանել զատելութիւն իմ առ քեզ, որ դիւցազնութեան թեկն ածեր:

ՍՄԲ. Բարէ:

ՏՐ. Հիացումն պանչելի:

ԵՐԳ. Այսպէս յարգեմ ես զպարգևս ձեր. համարեցամ մեծ ինչ պարգև շնորհել ինձ 'ի դմա. մի թէ մի սա՛ էր միայն յինէն ապստամբ. ո՛չ աւանիկ բանակք գուռնագուռնդ սպայից ապստամբք տիրանենք գումարեալ են 'ի վերայ իմ. թող և Կոռնակ ընդ նոսին դասեսցի. և ոչ նա միայն, այլ և ամենայն առհասարակ աղքէ և լեզուք ընդ ձերով ապստամբութեան գրօշուք որ ընդ օդս սաւառնեալ շառաչէ՝ վառեսցին. սիրտ Երուան դայ ոչ զանգիտեցէ:

ՍՄԲ. Ի մեծաբանել լեզուի սիրտ անմուռնչ հեծէ 'ի ներքուստ. 'ի յայտնել դաւողին՝ լուծանի երկիւղն. սակայն վստա՛հ ինչ իցէ սիրտ քո, թէ չիցեն և այլք 'ի քոյոց այտի արգարութեան վրէժխնդիրք:

ՏՐ. Այն ած աւասիկ, Սմբատ. չլացար չտեսանել աստ զՏուր. ցերբ է այս՝ հանգուրժել խռովայոյզ որոմնացան բանիցք. այս զէնք իցեն քաջացք:

ԵՐԳ. Աղէ, թէ ախորժես՝ հան յինէն և զսոսա. հապա և դուք ևս յո՛ կամք են զնացէք, յոր կողմն և կամիք հատարուք. գիտացից և ես քաջնիք ոմանք իցեն ոխերիմք, ընդ որս հասանէ ինձ տալ պատերազմ. աղէ, հիմ գանդաչէք, կամ ընդ իս կամ ընդ Սմբատ. մի թէ և զիս կարէք հերձանել պատառել յինէն. ես ընդ իս եմ, շատ է:

ՍՄԲ. Յուսահատութեան բարբառ. ողորմիմ քեզ, Երուանդ, գթամ 'ի քեզ. և եթէ չէր գթութեալ՝ այսչափ ոչ զիջանէի. յիշեա զհրէշ տակութիւնս, յիշեա զգազինսն. տակաւին զոյ ժամանակ թէ մեղմանաս 'ի հետեալ յամառութենէդ:

ԵՐԳ. Ողորմիս, գթաս 'ի վերայ իմ... Ե՛րբ եղէ ես 'ի քէն կարօտ գթութեան. ասեա՛ զիս ասեա՛

տիրադրուժ վատ արանց: Չհրեշտակութիւն քո
յուշ ածես՝ միւսանգամ բորբոքել զարտմտու-
թիւն իմ: տակաւին ողջ եմ ես, լսես: եթէ եր-
բէք իւրիւր կարօտացայց ես՝ սրոյ իմոյ և բազկի
կարօտացայց որ հաւատարիմ ընդ իս մնացեն
և ՚ի վերջին յուսահատութեանս: արդ լուար:

ՍԹԲ. Լուայ:

ԵՐԴ. Ո՛չ շատ իցէ:

ՍԹԲ. Շատ է: (Կտի գնալ):

ԵՐԴ. Լուր. երթ պատմեա և ՚ի քում բանակի
զամենայն զոր լուար և տեսեր. մինչև զգործ
առեալ՝ լուիցեն նախ ընդ իմ զէջ գան:

ՍԹԲ. Ուսանելոյ չեն ինչ պէտք. գիտեմ զինչ ա-
սիցեմ. պատմեցից բայ Երուանդ Թօթափեալ
յամենայնէ, անյոյս յամենեցունց, յանձն և ՚ի
սուր իւր ապաստան կայ՝ դարձուցանել ՚ի սիրտ
իւր. և այնպէս ակն ունի փրկիլ ՚ի ձեռաց մերոց.
և լուծից լքուցից զարուժիւն քաջութեան սպա-
ռազէն վառեալ բիւրուց բանակաց: (Ելալ):

ՏԵՍԻԼ Զ.

ԵՐՈՒԱՆԴ, ԵՐՈՒԱՋ, ՏՈՒՐ, ԶԱՐԵՆ:

ԵՐԴ. Երթ և դու, անօրէն, շնորհ կաջիւր ատե-
լութեան իմում. բայց այժմէն կարճ ՚ի կարճոյ
չարաչար մահու սպանեալ էր զկեանս քո յեր-
կրէ, և հոսեալ զաճիւն ոսկերացդ: Ո՛չ ահա ՚ի
վեր ել նենգութիւնդ որ մերժեցար խորհեցարն
նախ յուխտիցն երգմանէ. գնայի՛ր արգեօք գոյժ
տալ նոցա զարգար վրիժուցս:

ՏՐ. Կոռնակ, ոչ իշխեմ հայել յերեսս քո:

ԵՐԶ. Դիւցազունդ, ինայեա, ներեա. ոչ միշտ
ուզողութեամբ դատին մահացուք. անմահից պա-
հալ է դատաստան սրտից:

ԵՐԴ. Անմահից եթերք են աթոռ, երկրի Թագա-
ւորք են աստուածք. անմիտ, զխորդ սիրտ ու-
ղիւ իցէ՝ որոյ Թիւր են գործք. ո՛չ ապաքէն
հրաժարեցեր դու ՚ի միաբան ուխտիցն:

ԵՐԶ. Զարգարութիւն ժխտել ոչ ուսայ. հրա-
ժարեցի ՚ի նենգութենէ:

ՏՐ. Ո՛չ և կուտեալ արս ՚ի գլուխ քո ելեր խաբ-
կանօք ընդ դուռն քաղաքիս:

ԵՐԶ. Այդպէս իցէ:

ԶԱՐ. Ո՛չ առ Թշնամիս անդր գնայիր հատուա-
ծեալ:

ԵՐԶ. Ճշմարտութեամբ է և այդ:

ԵՐԴ. Արդ ո՛չ մասնիչ ապստամբ իցես դու:

ԵՐԶ. Ոչ:

ԵՐԴ. Զուր դարանիս, չարաթոյն օձ ոխակալ,
խաբել խորամանկել զմեզ. գոնեա խոստովան
լեր զմեղանսն քում բարերարիդ. ահաւասիկ
շնորհեալ քեզ զկեանս քո:

ԵՐԶ. Զոր գործեալ և խորհեալ անգամ չիք,
զխորդ ձախողակի արգարութեամբ եղեց խոս-
տովան. կամիք ստիպել տագնապել զիս բռնի
մեղանս յանձն առնուլ ստուժեամբ: Եթէ մե-
ղուցեալ է, մահու պարտ եմ, առաջի քո է ա-
րիւն իմ, սիրտ իմ, ՚ի քո ձեռս տուեալ զա-
մենայն:

ԵՐԴ. Ոչ նոր ինչ ետուր դու ինձ զկեանսդ. յա-
ռաջին ժամէ անտի յորմէ համբարձայ ՚ի գահն

արքունի՝ տմենեցուն բաղդ տուաւ ինձ կնքեալ ՚ի
ձեռս: Եթէ արգար իցես, ապա զայն ասա յինչ
պէտա կամ յինչ խորհուրդս յայս գիշերախառն
գաղթ արշաւանի եղեր ձեռներեց. միթէ և այսմ
ինչ յուրանս կացցես լինել ինչ պատճառս:

ԵՐԶ. Ո՛վ գիք, ձեռն տուք. ահ, ոչ ժխտեմ և
կարեմ ոչ առանց անմտութեան. էր ինչ պատ-
ճառք, սակայն ոչ զոր կամէի կատարեցաւ. քան-
զի սպանեալ էր իմ նախարար զոմն ՚ի գնդին
մուրացեան... և կարծիք... ՚ի մտի էին... ահ,
ոչ կարեմ բարբառել. տէր իմ արքայ, Եթէ զիս
մահապարտ դատիս, եթէ խօսեցայց և եթէ ոչ,
սակայն նոյն մահապարտութիւն մնայ ինձ. ա-
ւասիկ եմ, դու ինքնին խնդրեա զվրէժ քո, և զիս
՚ի ցաւոց աստի ապրեցո:

ԵՐԴ. Մանեայ, արդ շատ է. մահապարտ իսկ ես
կարի քաջ, սակայն պարգեք Երուանդայ ան-
նախանձ են, ոչ գառնան յետս. միւսանգամ զու-
գիսդ շնորհեալ քեզ. միթէ ո՛չ զգոնացիս ճանա-
չել զիս և փոխարինել փեսաուդ. ահ, եթէ միւս-
անգամ ինչ ըմբռնեցիս, (այժմիկ այսպէս վճա-
րեալ իցէ), յայնժամ խորհեաց զինչ գործիցես.
նենգութիւն ոչ կարէ Թագչել ընդ երկար: (Իսկ-
նի) Բարէ, և առ իմէ մեռանի ընդ սմա սրտ-
մտութիւն իմ. է ինչ ՚ի ծածուկ որ կախարդէ
զիս... (Առ Զարէն): Արի, Զարէն, տար պա-
տուէր յինէն զօրավարաց զօրուն, պնդել ըզ-
գրունան, և մի տալ մուտ չարանիւթ ապստամբ
բաց և մի ել. և զգուշութեամբ շուրջ վառել
զպահ գիշերապահ գնդիցն. տացուք և մեք զան-
ձինս սակաւ մի քնոյ. և առաւօտուն պատրաստ
եղիցուք: (Ելան ընդ Զարէն):

ՏԵՍԻԼ Է.

ԵՐՈՒԱՋ, ՏՈՒՐ:

ՏՐ. Յաւէ ինձ մեծապէս, սիրեցեալդ իմ Երուազ,
զի ես ինձէն իմով խորհրդով և խրատու պատ-
ճառս ետու քոյին վշտացդ և ցաւաքնութեան:
Ակն ունիմ անկարծելի անգիտութեան յանցա-
նացս գիւրուժեամբ առ ՚ի քէն ներութեան
հանդիպել:

ԵՐԶ. Ոչ դու, քաջազունդ, ոչ դու. արիւն ծնո-
ղիս է, որ հալածէ զիս. բաղքն չարանախանձ
զինն դարանի որսալ զոտս իմ յորոգայթ մա-
հու: Յանցանս յուզէ յիս արքայ զայն ինչ որ չէ
՚ի միջի... է ինչ, եղբայր իմ, է յիմում անձին՝
զոր գուդ անգիտանաս... — Երկին, դու նե-
րեա, քեզ եմ փեսասպարտ. եթէ ոչ ՚ի քէն
շնչեցաւ յիս այս սէր և նախանձ արեան, եթէ
ոչ քե և առաջնորդեալ Թողի գտաճարն, և զառ-
՚ի սրբութիւնսն զիմ ձօնեալ մարմին ընդ բեռին
զրահիցս արկեալ՝ զնիզակն արի յաջում կռու-
ցի, եթէ ոչ ՚ի քէն կայծակնացաւ յիս բոց հայ-
րասէր ծնողասէր գորովոյ զնել զոգի ՚ի բռն ե-
լանել շրջել ընդ հետս նորա, դու ինքն արգա-
րադատ վրէժխնդիր վեհ, դու դատեա զգաւա-
տանս իմ. ահաւասիկ քոյին պաշտօնեայ. յիմ
վերայ խաղացեն շանթիք երկնատեղացք. նետք
քո վրիժագործք ձուլեալ և միեալ ՚ի հրաշունչ
հնոց բարկութեան սրտմտութեան ցամաքն քո

մեծի. և դա՛հուս Պարթևաց և եղբոր խմոյ ար-
քայի իմ հարազատիս խաղաղութիւն քո հաշտ
ակամբ սիրով խոնարհեալ ինչե՛ն 'ի յերկիր:

ՏՐ. Թող անդր 'ի բայ զաստուածսն, և մի վայ-
րապար զանձնէ գառախազեր. իմ է յանցումն,
խոստովանիմ և ես. ոչ ես վառեցի գրգռեցի
զքեզ յայդ գործ, ժպրհել ելանել 'ի ճամբար
թշնամւոյն, զգիշեր քեզ օգնական խոստացեալ.
Ճանաչեմ զամենայն, թէպէտ անագան, ներեա
ինձ. (Քիւտի). գլուխ վրիժապարտ: Եթէ զբաղ-
դէն բողոք ունել պարտ իցէ, ինձ անկ իցէ. զի
այն ինչ չհաւատարի 'ի միոյ վշտացդ զերծեալ
հասանէ ինձ գարձեալ այլ իմն գոյժ արկանել
քեզ:

ԵՐԶ. Զքնէ, ասա մի խնայեր. այսուհետեւ իմ
հատեալ է ակնկալութիւն բարւոյ:

ՏՐ. Այն իսկ՝ ոյր աղագաւ յայս վիշտ վտանգի
ըմբռնեալ կաս:

ԵՐԶ. Զպանելոյն 'ի պատերազմի, թէ հայր մեր
իցէ:

ՏՐ. Այո՛. սակայն...

ԵՐԶ. Եղուկ եմ. և ո՞ պատմեաց քեզ:

ՏՐ. Հարցի քննեցի, 'ի վերայ հասի զի մեռեալ
է, և խնդրեալ է խօսել...

ԵՐԶ. Ահ, շատ է արդ, Տուր, շատ է. գիտացի
ծանեայ զամենայն. (Կառալի):

ՏՐ. (Մէլախի) Նենգաւոր գաղտամիտ, զքնէ այդ
նորատեսիլ այրագոռութիւն երեսացդ:

ԵՐԶ. Աւաղ, Տուր, ահ, հայր իմ... իսկ զո՞
խնդրէր, եթէ պատմեալ ինչ իցէ 'ի բանակին:

ՏՐ. Ոչ. լուայ զի 'ի թափել ոգւոյն խնդրեալ է
զԱրքամ խօսել առանձինն. և աւաղելով հեծե-
ծութեամբ և անուանս ինչ Երուանդ, Կոռնակ
խոխոտելով, պակասեալ է:

ԵՐԶ. Բաւ է, մի յաճախեր ինձ ցաւ մանրապա-
տում առնելով. ո՛հ ինձ, եղուկ զինե, որդիս
թշուառական, անօրէն անկողնոց անօրէն ծնունդ,
զքնէ ակնկալութիւն 'ի քէն, բայց եթէ անօրէ-
նութեան: Միաք իմ, ոչ խաբեցար. ահաւա-
սիկ զոր երկնէիրն՝ ծնաւ. իմով ձեռամբ հայրա-
սպան գտանել. ահ. այ սուսեր արիւնհարբու,
հիմ ոչ բեկար խորտակեցար դու 'ի ձեռքն ի-
մում. մանաւանդ ընդէր զարտուղեցար 'ի մօտ
ճանապարհէն՝ եթէ արեան ծարաւէիր. ընդէր
յայս սիրտ անագորոյն ոչ յագեցուցեր զպատ-
քումն քո: Մահ, մահ, ուր իցես. երթամ 'ի
մէջ բիւրաւոր սուսերաց պատահել քեզ. այսու-
հետեւ արհամարհեմ զքեզ... և դու ևս գառ-
նացար ինձ, լոյս. արագորագ խաւարեսցին
բիւք աչացս չտեսանել զքեզ. չնչեւ զօգս զայս՝
զանգեալ ջերաջերմ ոգւով արեան ծնողիս...
մնա խաղաղութեամբ:

ՏՐ. Յով երթաս:

ԵՐԶ. Թոյլ արա ինձ. երթամ յայտնեմ Երուան-
դայ զանձն իմ, և խնդրեմ մահ 'ի ձեռաց նորա,
զի անագանցին դիք:

ՏՐ. Անսա, զի գործես. երթաս կորուսանել զիս.
Եթէ այդպէս՝ աւասիկ եմ, դու իսկ ինքնին
սպան զիս:

ԵՐԶ. Զիմրդ, ընդէր է քեզ մեռանել. ահ քաջդ,
մի այդպէս. պահեա դու զանձն քո արքունի
դահուն, պահեա եղբոր իմոյ:

ՏՐ. Սակայն իբրեւ զգաստ ինչ լինիցի արքայ եթէ

գիտէի ես զամենայն և ոչ զգացուցի նմա, ո՞չ ա-
պաքէն յանցաւոր դատիցիմ. ցաւք պաշարեցին
զքեզ, ոչ զարմանամ զի չիմանաս այսչափ:
Զքնէ օգուտ հօր քում 'ի մահուանէ քումմէ.
Թողուցու զնա այդպէս անվրէժ երերեալ 'ի
սանդարամետս. ոչ տեսանես զնա դի անկէն-
դան արիւնհաթախ անկեալ տարածեալ 'ի
դաշտի, որոյ մի մի վերք բերանացեալ վրէժ-
խնդրութիւն պաղատին:

ԵՐԶ. Եւ յումմէ՞ այլ խնդրեսցի վրէժ նորա, եթէ
ոչ յանիծակուռ բազկէ աստի և 'ի տարտարո-
սական արեանէս. էհ, թոյլ տուր:

ՏՐ. Անսա վայրիկ մի, անձին հրամայեա. չես
դու իշխան կենացդ. իմ է, ես պահեցի զնա
քեզ. Թողուցու այսպէս զգահն արքունի յան-
ստոյգ բազկի, որ և նա ինքն դէտակն ունի քոյին
քաջազօր բազկի: Հաւատա ինձ. գիտես իսկ,
զի չիք դք աւագ քան զիս 'ի բարձ արքայի. ես
ցուցանեմ քեզ ճանապարհ վրէժխնդրութեան
և հաստատելոյ դահիս արքունի. միայն երգուիր
դու ինձ հաւատս և լուութիւն մահուամբ չափ.
գիտես ո՞ խօսի ընդ քեզ:

ԵՐԶ. Գիտեմ, ո՞ քաջ. և ահա երգուեալ եմ 'ի
գիս ամենայն և յարիւն ծնողիս, և 'ի կեանս իմ՝
զոր ապրեցուցեր 'ի մահուանէ. եթէ զկեանս
իմ խնդրես, աղէ ասա, արդէն քո է:

ՏՐ. Եւ ոչ մաղ մի 'ի հերոյ քոյ անկցի. այլ քա-
ջայոյս իցես յաղթել ամենայն երկրւոյի:

ԵՐԶ. Փութա, մի զանգիտեր. վրէժխնդրութիւն
է այս արեան ծնողիս. եթէ սուր ասիցես՝ ար-
համարհեմ. եթէ ջուր՝ առ ոտն կոխեմ. հուր՝
ընդ այն արշաւեմ. պարիսպք երկաթիք՝ և թափ
ելանեմ:

ՏՐ. Զպատերազմիս առեալ է քո զչափ, և քանի
զեան աշխարհի անտի. 'ի նմանէ և տարապարտ
կորուստ հօր քո, զոր հաւատա ինձ որպէս եսս
վկայեմ, ոչ այնչափ ընդ քո ձեռն կորեալ դիւց-
աղն այն, որչափ խուժադուժ անագորոյն ռիու-
թեամբ եղբոր քո, որ եթէ և զաստուածսն ան-
գամ տեսանէր իւր ոսոխ յասպարիսի անդ, քա-
ւեա ինձ երկին, ժպրհէր սատակել: Եւ միթէ
զայսպիսի ոք այր համարիցի՝ Երուանդ իւր եղ-
բայր: Ահ, եթէ նա իմ էր, արդ ևս զայդ սու-
սեր այն ինչ տապացեալ յարեան ծնողիս 'ի սիրտ
նորա վարսէի և ոչ կրկնէի. աղէ տես յանձն քո,
քննեա զարժանն:

ԵՐԶ. Բաւէ, ուր իցեմ ես. մի եթէ ցնորիցիմ ինչ.
դու իցես Տուր. ոչ կարեմ հաւատալ: Զեղբայրն
իմ սպանանել. հերք իմ քստմնեալ զինե Գիզա-
նան. զքնէ էր զոր լուայ. չէր բաւական գիւն
ծնողիս, աստեղք աննուէրք, և զայս լուր դառ-
նութեան լսել անգամ գատեցայք զիս արժանի:
Ժպրհեցար դու, Տուր, խօսել ընդ իս զայդոսիկ.
լուան քեզ երկինք, և ոչ առաքեսցեն փայլատա-
կունս լեզանել զքեզ: Ահ, այո՛ այո՛ մերկանամ
ես զայս սուսեր, (հանէ) միեալ յարիւն ծնողիս
ոչ յայլ ինչ, քան եթէ 'ի խնդրել զվրէժ նորուն,
պաշտպանել հարազատիս, և ապա 'ի սիրտ իմ
միսէլ:

ՏԵՍԻԼ Ը.

ԵՐՈՒԱՆԻ, ՄԻՀՐԱՆ և առաջինքն:

ԵՐԴ. (Տեւեալ զտոբն 'ի քեռն Երուսաղայ, խորժէ Բէ
կաթի հարկանէլ զՏոբ). Ձի՛ գործես նենգող դաւա-
ճան. արդ միթէ և ա՛յք իմ խաբեցան այժմիկ. այ
յանդգնութեանն. 'ի հրապարակիս աստ սուր
հանել ընդդէմ սիրելոյս:

ԵՐԶ. Ոչ, խաբիս... ոչ է նա... ո՛հ երդումն ան-
հանձար:

ՏՐ. Խնայեա, դիւցազունդ, այն նորա սրամտու-
թիւն ոչ էր յիմ վերայ: (Դէտաօ). Ա՛հ, այժմ
մասնէ զիս:

ԵՐԴ. Ձուր հնարիս արդարացուցանել զնա. սէր
բարեկամութեան զառաժեցոյց զքեզ. միան-
գամ ատելութեան լուայ, արդ ոչ լսեմ սիրոյ:
Արի, Միհրան, տուր զգովաւ երկաթս. 'ի բանտ,
'ի բանտ զանօրէն դահիճդ:

ՄԻՀ. (Ի ցած) Կունակ, սիրելիդ իմ, իմով ձե-
ռամբ, ա՛յ ներեա ինձ. (ասէ և արկանէ ՂԱՐՈՒԱՆ 'ի
շլթայս):

ԵՐԶ. Արդ ուրախ եմ և ինգամ ընդ կապանս,
զի մերձեցայ մահու. միայն կամէի իմն ժամ մի
շնորհել ինձ, դիւցազունդ, զի ցուցից զիարդ
մեռանիցի Կունակ:

ԵՐԴ. Սպառնա՛ս ևս, ժպիրհ լեզուագար. ոչ
ժամ մի, այլ աւուրս շնորհեցից քեզ կտտել
զմարմինդ:

ԵՐԶ. Ոչ սպառնալիք են այս, տէր իմ արքայ,
այլ զի այժմ ոչ է ինձ թոյլ այլ ազգ ինչ խօսել:
Եթէ ոչ յաջողեսցի ինձ, յայնժամ տիրեցայց
ընդ մահս, յայնժամ խորշեցայց 'ի մահուանէ:

ԵՐԴ. Քարշեա տուր զգա 'ի բանտ, մի ևս լուայց
զգիւթեալ բարբառդ. (Միհրան կաղէ զնա). — Արի
եկ ընդ իս, քաջազուն Տուր... ա՛հ, ոչ մոռա-
նամ. գիտեմ զի փառքն են քեզ առաջնորդ 'ի
բարիս, ոչ վարձք: (Փնռ):

ՄԻՀ. Եղի՛ւն ինձ, զորքան այր բռնադատիմ 'ի
բանդ վարել կապանօք. զինչ արդեօք այսոցիկ
երկինք տացեն կատարած:

Վերջ Բ. Արարուածոյն:

Դրոշագ 'ի մահ Ուկոյիկեայ¹:

Վաղ ուրեմն մեկնեալ էաք մեք ան-
տի, և ահա տեսի սառուցեալ երկուս 'ի
խոռոչ մի, այնպէս զի միոյն գլուխ էր
միւսոյն զլխադիր. և որպէս սովեալ ոք
հաց ճարակի, այսպէս որ կայրն գլխով

¹ Բանիբուն բանասիրի մը աղաչանացը զնա-
նելով յանձն առինք Տանդէի առաջիկայ հրաշա-
լի գրուագիս այս երրորդ արձակ թարգմանու-
թիւնն ալ 'ի լոյս ընծայելու:

'ի վեր՝ հարստեաց զատամուհնս 'ի միւսն,
ուր ընդ ուղղոյ՝ ծոծրակն զօդի: Սոյն
գունակ և Տիգէոս առ զայրոյթ սըրտ-
մտութեան կրծէր ատամնացի զքունսն
Մենալիպեայ. իսկ սա զգանկն յօշա-
տէր և շուրջ զնովաւ: Ո՛վ դու, ասացի,
որ այդպէս հանգոյն անասնոյ ցուցանես
'ի դա զքէն վրիժուց կեղեքեալ զդա,
ասա ինձ ընդէր. զի վասն դորա թէ
դու արտասուես, ծանուցեալ թէ ո՛վ
ես դու և թէ զինչ եղեուն դորա, և ես
իսկ այլազգ յաշխարհն վերին տարայց
զքէն լուր, թէ այն իւ խօսիմս աստանօր
ընդ քեզ՝ ոչ ցամաքեսցի:

Ամբարձ զբերանն 'ի վեր եղեունա-
ւորն այն 'ի գիշախանձ ճաշոյն մաքրեալ
զայն հերթ ճակատուն, զի զյետակողմն
ապականեալ էր: Եւ ապա բարբառե-
ցաւ. կամիս զի արծարծեցից յիս զցաւ
աղէկէզ, զոր չև իմ պատմեալ՝ խորհելն
և եթ զայն գսիրտ իմ ճմլէ: Այլ եթէ
բանք իմ եղիցին սերմանք, որք դրու-
թանին զոր եսն ձրձեմբերցեն վատ ա-
նուն, տեսցես դու զբարբառ իմ խառն
ընդ արտասուս: Ոչ զիտեմ ո՛վ ես, և
ոչ՝ թէ զիարդ գալուստ քո այսրէն 'ի
սանդարամետս. այլ տոսկեան դր ինձ
թուիս արդարեւ 'ի լուր քո խօսից: Գի-
տես զի եղէ ես կոման Ուկոյիկն, և սա
դիտապետն է Ռուճճիէրի: Եւ արդ ա-
սացից ընդէր աստանօր կամ ես նմա
հուպ: Ի՛բր 'ի նենգաժէտ խորհուրդս
նորա եղեալ ապաստան՝ կալայ և սպա-
նայ, այն յայտ իսկ է քեզ. իսկ որ բնա-
ւին զանխուլ է 'ի քէն, թէ որպիսի մահ
հաս ինձ անողորմ, ունկնդիր լեր արդ,
և տեղեկացիս քանի մեղաւ յիս: Նրբին
լուսանցոյց անդ 'ի դղեկին որ վասն իմ
կալաւ զանունն Սովու, յորում և այլոց
անկ լիցի փակիլ, եցոյց ընդ ծերպ իւր
լուսնեակս ոմանս, և ահա անուրջ մի
չարաբաստիկ զհանդերձելոց պատա-
ռեաց ինձ քօղ: Երևութանայր սա ինձ
պետ և տէր, զգայլ ընդ կորիւնս ընդ
լեաուն հալածեալ. քանզի Պիսացուց
չէ մարթ տեսանել երբէք զլուկկա: Ընդ
շունս վտիտս յափշտակասէրս Կուլան-
տի, Սիղմոնտ և Լանֆրանքի ճակատեալ

կային : ի դոյզն ընթացից թուէին նոքա ինձ վաստակաբեկք , հայրն ընդ որդիս . և տեսանէի զի պատառէր նա սայրասուր ժանեօք զկողս նոցին : Եւ իբրեւ զարթեայ ընդ այգս այգուն , լուայ զաշխարհել որդեկաց իմոց՝ որ կային 'ի քուն անդանօր զինեւ՝ և խնդրել հացիկ : Անագորոյն ես , եթէ տակաւին ոչ արգահատիս ընդ դոյժն որ աղղէր իմումս սրտի . և թէ չարտասուեա ընդ այս , և ընդ ինչ լիցիս արտասուել : Վաղ իսկ զարթուցեալ էին 'ի քնոյ , և ժամն ճեպէր՝ յորում հանապազ սովորն էին մեզ ածել կերակուր . անցնիւր երկբայէր ընդ անուրջս իւր : Եւ ահա լուայ ներքուստ ճռնչին աղիսելոյ դրանց ահեղ զղեկին . և զաչս իմ 'ի դէմս որդեկաց իմոց դարձուցի առանց յօգելոյ բարբառ : Ոչ արտասուէի՝ այնպէս սալացեալ 'ի ներքս սրտիս . ողբային նոքա . և Անսելմեակն իմ ասաց ցիս . Հայրիկ , էր այդպէս հայիս , զի եղև ընդ քեզ : Այլ ես ոչ արտօսը , և ոչ յաւելի բան մի զօրն զայն , և ոչ զգիշերն որ ածէր յաշխարհ զարևն վաղուեան : Ի ծագել աղօտ նշուլից 'ի խորշ դժընդակ բանտին , և 'ի տեսանել իմում 'ի քառեակ դէմս անդ զնոյն իսկ զիմս կերպարան , խածի առ վշտիս զերկոսին ձեռս իմ : Նոցա զմտաւ ածեալ՝ զի ես զայն առ 'ի կաղզուրել զսիրտ առնէի , ելին կանգնեցան իսկոյն և ասեն . Հայր , յոյժ դուզնաբեայ իցեն մեր թախիժք , թէ մեօք ճարակիս . դու զգեցուցեր մեզ զայս հէգ մարմին , և դու 'ի սմանէ մերկացո զմեզ : Յայնժամ թագուցի զտագնապ սրտիս , զի մի յաւելից նոցա տըխրութիւն . կացաք անբարբառ զայն օր և վաղիւ . երկիր անողոք , ո՛հ էր ոչ հերձար : Եւ այն ինչ հասաք աւուր չորրորդի , անկաւ առ ոտս իմ կաղզոս տաբածեալ , և ասէ . Հայր իմ , ընդէր չօքնես ինձ : Աստ անկաւ մեռեալ . և որպէս դու զիս տեսանես , տեսի ես անդ զերեսին մի առ մի անկեալ 'ի հինգերորդի և 'ի վեցերորդ աւուր 'ի գետին : Յայնժամ գնայի ես կոյր առ խարխափ առ մէն մի նոցունց , զաւուրս երիս

ձայնեալ զնոսա՝ յետ մահու նոցին : Եւ ապա յաղթեաց սով վշտաց սրտի : Յասել իւրում զայս , դժնեայ հայեցիւք եխած վերստին զողորմելի գանկն ատամամբք իւրով որ պատահեցին ոսկերն՝ իբրու շան ժանիք կարծրակուռ : Ո՛վ Պիսա քաղաք , նախատինք գրոհից գեղապանծ երկրին , ուր քաղցրահնչէ սիւն 'ի լսելիս . քանզի մերձակայք քո յամեն քաղաք 'ի պատժել զքեզ , հասցէ կապրայա , հասցէ Գորգոմլեա , թումբբա կանգնեացեն 'ի բերան Առնեայ , զի հեղձցին 'ի քեզ բնակիչք համօրէն : Եթէ զՈւկոլին կոմս եցոյց համբաւ բերդորէից քոց եղեալ մատնտու , չէր պարտ քեզ զորդիս նորին այնպիսեաց մատնել աղետից : Չքմեղս առնէր հասակ նորաբոյս և նորն թերէ՝ զՈւկոլչիոնէ և զՊրիկադա և զմիւս երկոսին զոր երգն իմ 'ի վեր անդր յիշատակեաց :

ՏԱՆԴԷ՝ ՏԱՐՏԱՐՈՍ

ԵՐԳ ԼԲ-ԼԳ .

Գաղտնիք Ուկիսանոսի .

Պ . Կրին անուանի ծովասուզակը Հալիդի մէջ Սիւլլըր Պէնքս (Արծաթեայ խարակք) բսուած տեղը տեսածը այսպէս կը նկարագրէ . «Երբ ծովուն մէջ մը խեցայ , բուստի մեծ խարակի մը վրայ կեցայ , որուն երկայնութիւնը 40 մղոն , լայնութիւնը 10^է 20 մղոնի կը հասնէր : Այս բուստի ահագին խարակը ծովասուզից առջին այնպիսի գեղեցիկ ու վեհ տեսարան մը կը բանայ՝ որ երբեք տեսնուած չէ : Ձրին խորութիւնը 10^է ինչուան 100 ոտք կը զանազանի . և այնպէս ջինջ է որ ծովասոյզը ջուր մըտնելէն ետքը 2 ու 300 ոտք հեռաւորութենէ կրնայ տեսնել քիչ մ'աչքի մը շուրթեամբ : Շատ տեղ Ուկիսանոսին խորը մարմարիոնէ սալայատակի պէս շիտակ է . ուրիշ տեղ՝ բուստէ սիւներ կան կանգնած , 10^է ինչուան 100 ոտք երկայնութեամբ և 1^է 8 ոտք տրամագծով : Ամենէն բարձր սիւներուն գլուխ